ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Ա/Ձ Դավիթ Ներսիսյան-ն ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-26/1 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	ֆիրմային անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Ա/Ձ Դավիթ Ներսիսյան	Նախատեսվում է ձեռք բերել սպորտային հագուստ, կոշիկ - այլ պարագաներ լրակազմ: Մեկ լրակազմը ներառում է. 1. Շքերթային մարզահագուստ՝ բաճկոն և տաբատ (Կոստյում), 2. Օձիքով շապիկ Պոլո 3. Մարզական գլխարկ (Бейсболка), 4. Գուլպա, 5. Կիսատաբատ (շորտ), 6. Շքերթային սպորտային կոշիկ, 7. Սպորտային թիկնապայուսակ Ընդ որում. 1. Շքերթային մարզահագուստ՝ բաճկոն և տաբատ (Կոստյում). Շքերթային մարզահագուստը՝ կտորի բաղադրությունը՝ 60% բամբակ, 35 % պոլիեսթեր, 5% էլաստան, 255 գր. մակերեսային խտությամբ: Բաճկոնը և տաբատը: Բաճկոնը պետք է պատրաստված լինի մուգ կապույտ գույնի երկերեսանի կտորից: Բաճկոնը պետք է լինի ուղիղ ձևվածքի: Օձիքը՝ կայուն: Բաճկոնի թևի և փեշի եզրերը մշակված փակ շղթայակար ժապավենով: Բաճկոնի բոլոր կարերը մշակված չորս թել եզրակարով մեքենայով: Բաճկոնի կողային հատվածները կաթնագույն գույնի երկերեսանի կտորե զարդարանքով (отделка): Բաճկոնի և տաբատի կողային գրպանները ճարմանդով՝ ֆիրմայի անվանումով : Տաբատը ուղիղ ձևածքի, գոտկատեղը ներսից մշակված 5 սմ. լայնությամբ էլաստիկ ժապավենով: Տաբատի գոտկատեղի ռետինե ժապավենի երկայնքով անցկացված պարան, ֆիրմայի անվանումով, որը մշակված է օղակ կարող մեքենայով: Տաբատի փեշի եզրերը կարված հարթակարող մեքենայով՝ հարթակարի բարձրությունը 2,5 սմ.: Բաճկոնի

		կրծքի ձախ վերին հատվածում ժակկարդային հեծանակ՝ «Հայաստանի Հանրապետության զինանշան» (7,5x7,5 սմ. չափսի) և աջ վերին հատվածում ֆիրմային անունը: Բաճկոնի մեջքին լատինատառ մեծատառերով «ARMENIA» (մաղային տպագրություն, տառերի բարձրությունը՝ 5 սմ), «Հայաստանի Հանրապետության դրոշ» (ասեղնագործած) և ձախ կողային հատվածում հայկական զարդանախշ (մաղային տպագրություն): Տաբատը պետք է պատրաստված լինի մուգ կապույտ գույնի երկերեսանի կտորից՝ կողային հատվածները կաթնագույն գույնի երկերեսանի կտորե զարդարանքով (отделка): Տաբատի ձախ վերին հատվածում՝ ֆիրմային անուն-ը, որի ներքևամասում հեծանակ՝ ամրացված ասեղնագործության եղանակով (արտաքին տեսքը՝ ըստ Պատվիրատուի կողմից ներկայացված նմուշի, համակարգչային տպագրություն): Ընդհանուր մատակարարվելիք 650 հատ շքերթային մարզահագուստի (650 հատ բաճկոն և 650 հատ տաբատ (կոստյում)) քանակից՝ XS չափսի - 13 հատ, S չափսի - 70 հատ, M չափսի - 160 հատ, L չափսի - 165 հատ, XL չափսի - 114 հատ, XXL չափսի - 75 հատ, XXXL չափսի - 38 հատ, XXXXL չափսի - 10 հատ, XXXXXL-5 հատ: 2. Օձիքով շապիկ Պոլո Օձիքով շապիկը (Պոլո) պետք է պատրաստված լինի կաթնագույն գույնի Պենյա Պիկե- տրիկոտաժե կտորից, բաղադրությունը՝ 100% բամբակ, 200 գ/մ2 մակերեսային խտությամբ: Օձիքով շապիկը կարճաթև է՝ 3 օղակ կոճակով: Օձիքով շապիկի պարանոցային մասի հետնամասում կտորե հավելյալ ժապավենաթել (տեսմա): Օձիքը և թևերի եզրերը կաթնագույն գույնի՝ բարձրորակ Պենյա Ռիբանա կտորե գործվածքից: Օձիքով շապիկի ձախ թևին՝ հեծանակ, ամրացված ասեղնագործության եղանակով (արտաքին տեսքը՝ ըստ Պատվիրատուի կողմից ներկայացված նմուշի, համակարգչային տպագրություն), իսկ աջ ամբողջ թևին՝ հայկական զարդանախշ (մաղային տպագրություն): Կրծքի ձախ վերին հատվածում ժակկարդային հեծանակ՝ «Հայաստանի Հանրապետության զինանշան» (7,5x7,5 սմ. չափսի), իսկ աջ հատվածում ֆիրմային անունը: Օձիքով շապիկի մեջքին մուգ կապույտ գույնի «Հայաստանի Հանրապետության զինանշան» մաղային տպագրություն: Ընդհանուր մատակարարվելիք 650 հատ սպորտային շապիկի (պոլո) քանակից՝ XS չափսի - 13 հատ, S չափսի - 70 հատ, M չափսի - 160 հատ, L չափսի - 165 հատ, XL չափսի - 114 հատ, XXL չափսի - 75 հատ, XXXL չափսի - 38 հատ, XXXXL չափսի - 10 հատ, XXXXXL-5 հատ: 3. Մարզական գլխարկ (Бейсболка) Մարզական գլխարկի մոդելը՝ բեյսբոլային, մուգ կապույտ գույնի, առնվազն 330 գրամ մակերեսային խտությամբ բամբակե գործվածք, կոշտ հովարով, չափսը փոփոխելու հնարավորությամբ: 6 պանել, 4-6 հատ ասեղնագործած

		եզրով օդափոխության անցքերով (լյուվերսներով), հովարը սենդվիչ տիպի՝ դիմային եզրի կենտրոնում սպիտակ գիծ: Գլխարկի դիմային մասի կենտրոնում ժակկարդային հեծանակ՝ «Հայաստանի Հանրապետության զինանշան» (6,5x6,5 սմ չափսի): Գլխարկի կողային հատվածում՝ հեծանակ, ամրացված ասեղնագործության եղանակով (արտաքին տեսքը՝ ըստ Պատվիրատուի կողմից ներկայացված նմուշի, համակարգչային տպագրություն): Ընդհանուր մատակարարվելիք մարզական գլխարկների քանակը՝ 650 հատ: 4. Գուլպա. Գուլպան: Բաղադրությունը՝ 80% բամբակ, 12% պոլիեսթեր և 5% սպանդեքս: Գուլպան պետք է լինի կարճ՝ սպիտակ գույնի: Գուլպայի վրա լինի տպված «ARMENIA»: Թղթե տեղեկատվական պիտակ, որի մեջ նշվում են ֆիրմայի անուն-ը, չափսը, հումքի բաղադրությունը, խնամքի վերաբերյալ հրահանգները: Ընդհանուր մատակարարվելիք 650 հատ գուլպայի քանակից՝ 36-40 չափսի - 230 հատ, 41-45 չափսի - 420 հատ: 5. Կիսատաբատ (շորտ). Կիսատաբատը: պետք է լինի ուղիղ ձևածքի՝ երկու կողային գրպաններով, գոտկատեղը ներսից մշակված 5 սմ լայնությամբ էլաստիկ ժապավենով: Կիսատաբատի գոտկատեղի ռետինե ժապավենի երկայնքով անցկացված է պարան՝ ֆիրմայի անվանումով, մշակված օղակ կարող մեքենայով: Կիսատաբատի աջ ոտքին ուղղահայաց լատինատառ մեծատառերով «ARMENIA» (մաղային տպագրություն, տառերի բարձրությունը՝ 3 սմ.), ձախ ոտքին՝ ֆիրմային անուն-ը: Հետնամասի աջ կողային հատվածում հայկական զարդանախշ (մաղային տպագրություն): Կիսատաբատի կողային հատվածները կաթնագույն գույնի երկերեսանի կտորե զարդարանքով (отделка): Կտորը երկերեսանի՝ մուգ կապույտ գույնի: Կտորի բաղադրությունը՝ 60% բամբակ, 35% պոլիեսթեր, 5% էլաստան, 255 գր. մակերեսային խտությամբ: Ընդհանուր մատակարարվելիք 650 հատ կիսատաբատի (շորտ) քանակից՝ XS չափսի - 13 հատ, S չափսի - 70 հատ, M չափսի - 160 հատ, L չափսի - 165 հատ, XL չափսի - 114 հատ, XXL չափսի - 75 հատ, XXXL չափսի - 38 հատ, XXXXL չափսի - 10 հատ, XXXXXL-5 հատ: 6. Զույգ սպորտային կոշիկ. Սպորտային կոշիկը պատրաստված լինի մուգ կապույտ և սպիտակ գույնի բարձրորակ բնական և արհեստական նյութերի համադրությունից (կապույտ գույնը գերակշռի)՝ բնական կաշի, բնական նրբակաշի, ինչպես նաև ցանցանման կտորներ, որոնք ապահովում են բարձր օդաթափանցելիություն կոշիկի ամբողջ շահագործման ընթացքում՝ ապահովելով օպտիմալ ջերմաստիճան: Սպորտային կոշիկի վրա պետք է լինի «Հայաստանի Հանրապետության դրոշ-ը և ֆիրմայի անուն-ը (ասեղնագործած): Երեսացուի վրա քուղերի անցկացման համար նախատեսված են 7 զույգ

		անցքեր: Սպորտային կոշիկի ներդիրը պետք է լինի օրթոպեդիկ՝ երեսպատված բնական կաշվով: Ներբանը պետք է պատրաստված լինի սպիտակ գույնի բարձրորակ տերմոէլաստոպլաստից (EVA, ռելիեֆային կառուցվածքով): Ընդհանուր մատակարարվելիք 650 զույգ սպորտային կոշիկի քանակից՝ 36 չափս - 10 զույգ, 37 չափս - 15 զույգ, 38 չափս - 35 զույգ, 39 չափս - 60 զույգ, 40 չափս - 110 զույգ, 41 չափս - 105 զույգ, 42 չափս - 105 զույգ, 43 չափս - 90 զույգ, 44 չափս - 55 զույգ, 45 չափս - 45 զույգ, 46 չափս - 20 զույգ: 7. Սպորտային թիկնապայուսակ. Սպորտային թիկնապայուսակը պետք է պատրաստված լինի մուգ կապույտ գույնի ջրակայուն կտորից: Թիկնապայուսակը բաղկացած է երկու հիմնական մասերից՝ փակվող ճարմանդով: Թիկնապայուսակի դիմային մասը ունի երկու վրադիր գրպան՝ ճարմանդով: Կողային պատերի վրա ցանցանման կտորից գրպաններ՝ եզրերը էլաստիկ ժապավենով մշակված: Թիկնապայուսակի ետնամասը օրթոպեդիկ: Թիկնապայուսակի գրպանները ներսից աստառապատված են և բաժանված են առանձին գրպանիկների: ՈՒսափոկերը ունեն երկարության կարգավորիչներ: Պայուսակի չափսերն են՝ Բ*Լ*Խ 48*33*20 սմ: Բոլոր նյութերը պետք է պատրաստված լինեն բարձրորակ հումքից, դիմացկուն պատռվածքների նկատմամբ, հաճախակի լվացումների դեպքում լինեն կայուն մաշվածության նկատմամբ և ունենան ջրակայուն հատկություններ: Սպորտային թիկնապայուսակի վրա պետք է տպագրված լինի «ARMENIA» և «Հայաստանի Հանրապետության դրոշ»: Ընդհանուր մատակարարվելիք սպորտային թիկնապայուսակների քանակը՝ 650 հատ: Ծանոթություն; Շքերթային մարզահագուստը, օձիքով շապիկ Պոլո, գուլպան և կիսատաբատը՝ հաճախակի լվացումների դեպքում պետք է լինեն կայուն և պիլլինգի չենթարկվեն, չընդարձակվեն: Մարզահագուստը նախատեսվում է սրահներում ու դրսում հագնելու համար՝ արտասահմանյան երկրներում մարզական միջոցառումների բացման և փակման արարողության, ինչպես նաև պարգևատրմանը ներկայանալիս: • Կատարողը պետք է սպորտային հագուստ, կոշիկ - այլ պարագաներ լրակազմի գունային համադրությունը և դիզայնը համաձայնեցնի ՀՀ ԿԳՄՍ նախարարության սպորտի քաղաքականության վարչության հետ: Ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Ապրանքների փոխադրումը և բեռնաթափումը իրականացվում է կատարողի կողմից՝ ամբողջ քանակը հանձնելով ՀՀԿԳՄՍ նախարարությանը՝ սպորտի քաղաքականության վարչություն: Լրակազմի մեջ ներառված ապրանքները պետք է լինեն նույն ապրանքային նշանի:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

И/П Давид Нерсисян в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-26/1 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	фирменное наименование	технические характеристики
1	И/П Давид Нерсисян	